«ՍԱՍ» ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏՆԵՐԻ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴԱՐ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Ներածություն

Սույն կանոններով սահմանվում են «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից հավանական մատակարարի ապրանքի ընտրության սկզբունքները և չափանիշները, այդ թվում՝ հավանական մատակարարի կողմից առևտրային առաջարկի ներկայացման կարգը, ձևը, առաջարկի քննարկման և գնահատման կարգը, առևտրային ցանցում ապրանքների ցուցադրման պայմանները, առևտրային ցանցում ներկայացված ապրանքներից և մատակարարներից հրաժարվելու կարգը և հիմքերը (մատակարարման հարաբերությունների դադարեցման հիմքերը)։

Սույն կանոններով ապահովվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.9-րդ հոդվածի պահանջները, մատակարարների համար առավել թափանցիկ և կանխատեսելի է դառնում Ընկերության հետ հարաբերությունները, ստեղծվում են լրացուցիչ երաշխիքներ բացառելու խտրական մոտեցման որևէ հնարավորություն մատակարար ընկերությունների նկատմամբ, ինչով էլ ապահովվում է ազատ տնտեսական մրցակցությունը Ընկերության կառավարման ներքո գտնվող առևտրային ցանցերում։

1. Ընկերության կողմից հավանական մատակարարի ապրանքի ընտրության սկզբունքները

1.1. Միասնական ստանդարտներ

Ընկերության կողմից մատակարարների և ապրանքների ընտրությունն իրականացվում է միասնական չափանիշների հիման վրա, որոնք միտված են ապահովելու տնտեսական արդյունավետություն։ Չի թույլատրվում պայմանագրի կնքումից հրաժարում այն հիմքերով, որոնք նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոններով։

1.2. Խտրականության բացառում

Ընկերությունը բացառում է խտրական պայմանների սահմանումը և կիրառումը մատակարարների հետ հարաբերությունների հաստատման, ընթացիկ ու դադարեցման գործընթացում, բացառությամբ եթե առկա է ողջամիտ և օբյեկտիվ տարբերության հիմք՝ պայմանավորված տնտեսական պայմաններով (գործոններով) կամ առանձին խմբի կարգավիճակով։

1.3. Թափանցիկություն և հրապարակայնություն

Մատակարարների հետ հարաբերություններում Ընկերությունը ապահովում է մատակարարների հասանելիությունը մատակարարի ապրանքի ընտրության սկզբունքներին և չափանիշներին, ինչպես նաև այն տեղեկատվությանը, որն էական է համագործակցության համար: Նշված տեղեկատվությունը ներկայացվում է Ընկերության պաշտոնական կայքէջում:

1.4. Արդյունավետություն

Ընկերության նպատակն է իր առևտրային ցանցի միջոցով վաճառել որակյալ ապրանքներ տնտեսապես հիմնավորված գներով մատակարարների հետ հնարավոր փոխշահավետ համագործակցության պայմաններով:

1.5. Ողջամիտ ընտրողականություն

Օրենքով և սույն կանոններով սահմանված կանոնների սահմաններում Ընկերությունը կարող է իրականացնել մատակարարների, ապրանքների, ապրանքների արտադրության պայմանների ստուգում՝ մատակարարների կողմից բարեխղճության կանոնը ապահովելու և նրանց արտադրանքը ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխանելիության մեջ հավաստիանալու նպատակով: Ընդ որում կոնտրագենտներ ընտրելիս նախապատվությունը տրվում է այն մատակարարներին, որոնք առևտրային գործունեության ավելի երկար փորձ ունեն, իրենց գործողություններով ապացուցել են ապահով գործընկեր լինելու փաստը և միտված են երկարատև համագործակցության:

1.6. Երկարատև և կայուն համագործակցություն

Մատակարար և ապրանք ընտրելիս Ընկերությունն ուշադրություն է դարձնում կայուն զարգացում ապահովելու համար երկարատև բիզնես համագործակցություն սկսելու հանգամանքին:

2. Հավանական մատակարարի ապրանք ընտրելու գործընթացը:

Ընկերության կողմից նոր ապրանքներ ներգրավելու անհրաժեշտությունը որոշվում է առևտրային ցանցում ներկայացված ապրանքատեսակների, դրանց քանակի, տեղերի առկայության, դասավորվածության առանձնահատկություններով պայմանավորված, որի վերաբերյալ պատասխանատու աշխատակիցների կողմից գրավոր կամ բանավոր ձևավորվում է պատվեր:

Ընկերությունում իրացման համար նոր ապրանքներ ներգրավվում են երեք եղանակով.

1. նոր մատակարարների հետ համագործակցություն սկսելով,

2. գործող մատակարարների կողմից նոր ապրանքներ ներգրավվելու միջոցով,

3. սեփական ուժերով ապրանքներ ներգրավելու միջոցով։

2.1. Ընկերությունում նոր մատակարարի ներգրավվման գործընթացը.

Ընկերությունում նոր մատակարարների ներգրավվումը տեղի է ունենում երկու հիմնական ուղղությամբ.

2.1.1. Ընկերությունն ինքնուրույն է ընտրում մատակարարներին, որոնք պետք է մատակարարեն անհրաժեշտ ապրանքը.

ա) Դա տեղի է ունենում հետևյալ դեպքերում.

- Եթե ապրանքատեսակը ներկայացված չէ Ընկերությունում, սակայն այդ ապրանքի կարիքը զգացվում է,
- Ներկայացված է այդ ապրանքատեսակը, սակայն անհրաժեշտություն է առաջացել մեծացնել ծավալները և տեսականին, այդ թվում՝ նոր առևտրային օբյեկտների բացման ժամանակ,
- Առաջացել է առևտրային ցանցում ներկայացված ապրանքները և մատակարարներին փոխելու անհրաժեշտություն սույն կանոնների 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգով,
- Այլ դեպքերում անհրաժեշտ է ներգրավել նոր մատակարար։

բ) Ընկերությունը մատակարարին ընտրում է.

- Բաց աղբյուրներում կամ իր մոտ առկա տվյալներում որոնման արդյունքում,
- Անհրաժեշտության դեպքում հայտարարում է մրցույթ կամ այլ եղանակով է ներգրավում մատակարարին։

2.1.2. Համագործակցության առաջարկը ներկայացվում է մատակարարի կողմից։

Մատակարարները կարող են ներկայացնել համագործակցության առաջարկ՝ գրավոր ներկայացնելով սույն կանոնների հավելվածով սահմանված ձևի դիմում։

Ընկերությունն իրավունք ունի մատակարարից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն դիմումում նշված տեղեկությունների, տվյալ մատակարարի և նրա կողմից իրացման նպատակով առաջարկվող ապրանքների վերաբերյալ, այդ թվում՝ ապրանքներից նմուշներ՝ ուսումնասիրելու, փորձաքննության ներկայացնելու, ֆոկուս խմբերում փորձարկելու նպատակով։

Ընկերությունը և մատակարարն իրավունք ունեն փոխադարձ համաձայնությամբ իրականացնել ապրանքի արտադրության պայմանների համատեղ

ուսումնասիրություն՝ այդ նպատակով ներգրավելով անհրաժեշտ որակավորում ունեցող անձ կամ կազմակերպություն։

Ընկերությունը գրավոր առևտրային առաջարկը քննարկում է այն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ մատակարարի ապրանքի ընտրության համար անհրաժեշտ են լրացուցիչ գործողություններ (փորձաքննության իրականացում և այլն), ապա ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 15 աշխատանքային օրով, եթե նշված գործողության իրականացման համար անհրաժեշտ չէ այլ ժամկետ, որի մասին առևտրային ցանցը գրավոր տեղեկացնում է առևտրային առաջարկ ներկայացրած հավանական մատակարարին:

Մատակարարի համագործակցության առաջարկին գնահատական տրվում է Ընկերության կողմից՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

1. մատակարարի կողմից առաջարկվող ապրանքատեսակների ցանկը, առաջարկվող գները, առևտրային ցանցին մատակարարվող ծավալները և հաճախականությունը, մատակարարման աշխարհագրությունը և կազմակերպման կարգը,
2. համեմատությունը համանման ապրանքների արդեն իսկ գործող պայմանների հետ և այլ մատակարարների կողմից առաջարկվող պայմանների հետ,
3. տվյալ ապրանքի գնողունակության և հնարավոր վաճառքի կանխատեսումները,
4. առևտրային ցանցերում ներկայացված ապրանքատեսականու հնարավոր ընդլայնման տնտեսական նպատակահարմարությունը։

Դրական որոշում ընդունվելու դեպքում տեղի է ունենում համագործացության մեկնարկը։

Բացասական որոշում ընդունվելու դեպքում այդ մասին տեղեկացվում է մատակարարին գրավոր եղանակով՝ դիմումում նշված ծանուցման եղանակով։

2.2. Ընկերության հետ համագործակցող մատակարարներից նոր ապրանքի ներգրավման գործընթացը.

Սույն կանոնների 2.1.1 կետի «ա» ենթակետում նախատեսված դեպքերում, ինչպես նաև տնտեսական անհրաժեշտությամբ պայմանավորված Ընկերությունն իրավունք ունի գործող մատակարարներից ստացված առաջարկի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ընդլայնել գործող մատակարարի կողմից Ընկերությանը մատակարարվող ապրանքների ցանկը՝ ներգրավելով նոր ապրանք։

Նշված դեպքում, ինչպես նաև սեփական ուժերով նոր ապրանք ներգրավելու վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի են առնվում սույն կանոնների 2.1.2. կետի հինգերորդ պարբերությամբ նշված հանգամանքները, ինչպես նաև սույն կանոններով ապրանքներին ներկայացվող պահանջները:

3. Մատակարարին և ապրանքին ներկայացվող նվազագույն պահանջները

Մատակարար և ապրանք ընտրելիս Ընկերությունը ղեկավարվում է հետևյալ չափանիշներով.

3.1. Մատակարարի իրավական կարգավիճակը

- Մատակարարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանդիսանում է իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.
- Մատակարարը չի գտնվում լուծարման գործընթացում.
- Մատակարարը չի ճանաչվել սնանկ, մատակարարի նկատմամբ ձեռնարկված չէ սնանկության գործընթաց.
- Մատակարարը Ընկերության կամ Ընկերության հետ փոխկապակցված ընկերությունների հետ հարաբերություններում նախկինում դրսևորել է բարեխիղճ վարքագիծ, չկա ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանք.
- Չկա հավաստի տվյալ, որ մատակարարը շուկայում գործող ընկերությունների հետ հարաբերություններում պարբերաբար թույլ է տալիս պարտավորությունների խախտումներ,

3.2. Գնային առաջարկը

- Ներկայացվող գնային առաջարկը պետք է լինի մրցունակ, համապատասխանի Ընկերությունում գործող գնային քաղաքականությանը,
- Ընկերության կողմից մատակարարի առևտրային առաջարկի ընդունումը պետք է լինի տնտեսապես հիմնավորված.

3.3. Ապրանքին ներկայացվող պահանջները

- Ապրանքի որակը պետք է համապատասխանի սանիտարական, տեխնիկական և բոլոր այլ ստանդարտներին և նորմերին, որոնք հաստատված են և գործում են ՀՀ-ում:
- Ապրանքի արտադրության գործընթացը, ըստ սույն կանոնների 2.1.2. կետի երրորդ պարբերությամբ սահմանված կարգով կատարված ուսումնասիրության արդյունքների, համապատասխանում է Ընկերության կողմից առաջ քաշվող պահանջներին.

- Ապրանքի մակնշումը, փաթեթավորումը պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրության պահանջներին, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում նաև ապրանքի վրա պետք է փակցված լինի QR կոդ.
- Ապրանքն ընդգրված է Ընկերության կայքէջում հրապարակված ապրանքատեսակների ցանկում:
- Ապրանքի մատակարարումը պետք է կազմակերպվի այն ժամկետներում, որ Ընկերությունը ողջամիտ հնարավորություն ունենա ապրանքն իրացնել այդ ապրանքի մնացած պիտանելիության ժամկետում.
- Ապրանքի արտաքին չափերը պետք է համապատասխանեն Ընկերության առևտրային ցանցում առկա պահանջներին.
- Ապրանքի որակական և համային հատկանիշները պետք է ապահովեն Ընկերության առևտրային ցանցում իրացվելիության նվազագույն մակարդակ:

3.4. Ապրանքի մատակարարմանը ներկայացվող պահանջները

- Մատակարարի կողմից պայմանագրով սահմանված ժամանակացույցով և քանակներով կապահովվի ապրանքների անխափան մատակարարումն առանց ընդհատումների,
- Մատակարարի մոտ առկա է առաքումը կազմակերպելու հնարավորություն դեպի Ընկերության համապատասխան առևտրային օբյեկտներ:

3.5. Հանգամանքներ, որոնք մատակարար ընտրելիս դիտվում են որպես առավելություն.

- Մատակարարի կողմից սեփական արտադրություն ունենալը, մակնշման և պահպանման համար սեփական արտադրական տարածքների առկայությունը,
- Մատակարարի կողմից առևտրային ցանց հանդիսացող այլ տնտեսավարող սուբյեկտների հետ գործող պայմանագրերի առկայությունը, ինչը հանդիսանում է մատակարարի փորձառության և ապրանքի իրացվելիության երաշխիք: Այլ առևտրային ցանցերի հետ համագործակցության վերաբերյալ տեղեկատվությունը մատակարարի կողմից ներկայացվում է ըստ նրա ցանկության, դրա չներկայացումը այլ հավասար պայմաններում չի կարող մեկնաբանվել ի վնաս տվյալ մատակարարի,
- Ապրանքի որակը բնութագրող լրացուցիչ միջազգային ստանդարտներին համապատասխան ստացված հավաստագրերի, սերտիֆիկատների առկայությունը,
- Ապրանքը օրգանական գյուղատնտեսության կանոններով արտադրված լինելու վերաբերյալ սերտիֆիկատի առկայությունը,
- Ապրանքի մակնշումը պարունակում է շտրիխ կոդ,

- Մատակարարի գործունեությունը սեփական ապրանքային նշանի ներքո,
- Մատակարարի պատրաստակամությունը քննարկելու ապրանքի փաթեթավորումը, քաշը, այլ հատկանիշները մինչև շուկայահանումը Ընկերության պահանջներին համապատասխան:
- Մատակարարը տվյալ շուկայում գործունեություն է իրականացնում մեկ տարուց ավելի,
- Մատակարարը հանդիսանում է ԱԱՀ վճարող:

4. Նոր ապրանք ներգրավելու վերաբերյալ գործող կամ հավանական մատակարարի առաջարկին տրվում է բացասական պատասխան, եթե՝

4.1. Մատակարարը կամ ապրանքը չի բավարարում սույն կանոնների 3.1, 3.2, 3.3 և 3.4 կետերով նախատեսված մեկ կամ մի քանի պայմաններին.

4.2. Հավանական նոր մատակարարը չի ներկայացրել սահմանված ձևի դիմում կամ դիմումը լրացրել է էական թերություններով, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու համագործակցության առաջարկը.

4.3. Մատակարարի կողմից Ընկերությանը ներկայացվել է ոչ արժանահավատ կամ թերի տեղեկատվություն մատակարարի, ապրանքի, դիմումով սահմանված այլ տեղեկատվության վերաբերյալ.

4.4. Մատակարարի կողմից ներկայացված առաջարկը հնարավոր չէ ընդունել՝ հաշվի առնելով տնտեսական նպատակահարմարության բացակայությունը, ինչը հիմնավորվում է սույն կանոնների 2.1.2. կետի հինգերորդ պարբերությամբ սահմանված կարգով գնահատման արդյունքում:

5. Առևտրային ցանցում ներկայացված և մատակարարվող ապրանքից հրաժարվելու հիմքերը.

Ընկերությունն իրավունք ունի հրաժարվել գործող մատակարարման պայմանագրում ներառված ապրանքից, եթե՝

- Տվյալ ապրանքը չի ապահովում իրացվելիության և շահութաբերության նվազագույն մակարդակը տվյալ ապրանքատեսակի համար.
- Առկա է հիմնավոր տվյալ, որ ապրանքը կամ դրա մակնշումը չի համապատասխանում որակին և մակնշմանը ներկայացվող պահանջներին.

- Ընկերությունը փոխել է ապրանքատեսակների ցանկը, ինչից հետո տվյալ ապրանքն այլևս ընդգրկված չէ Ընկերության առևտրային ցանցում իրացման ենթակա ապրանքատեսակների ցանկում.
- Ընկերությունը պարբերաբար սպառողներից ստանում է բողոքներ տվյալ ապրանքի վերաբերյալ.
- Ապրանքի վերաբերյալ առկա է իրավասու պետական մարմնի կամ դատարանի որոշումը, որ այն կամ նրա փաթեթավորումը, մակնշումը կամ ապրանքային նշանը խախտում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այլ անձանց իրավունքները և շահերը.
- Այլ դեպքերում, եթե տվյալ ապրանքի իրացումը կհանգեցնի Ընկերության տնտեսական գործունեության վատթարացմանը:

6. Ընկերությունն իրավունք ունի հրաժարվել մատակարարից՝ լուծելով նրա հետ կնքված պայմանագիրը, եթե՝

- Առկա են տվյալներ, որ մատակարարը այլևս չի բավարարում սույն կանոնների 3.1 կետով սահմանված պայմաններին,
- Մատակարարը կատարել է պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտումներ, այդ թվում՝ մատակարարման խախտումներ, վճարումների գծով խախտումներ,
- Սույն կանոնների 5-րդ կետի հիմքով տեղի է ունեցել մատակարարի ապրանքից հրաժարում, իսկ այլ ապրանք մատակարարի կողմից չի մատակարարվում Ընկերությանը:

7. Ընկերության առևտրային ցանցում ապրանքների ցուցադրման պայմանները

7.1. Ընկերությունն ապահովում է ապրանքների ցուցադրման հավասար հնարավորություններ բոլոր մատակարարների համար՝ հաշվի առնելով սույն կանոններում առկա կարգավորումները:

7.2. Առևտրային ցանցում ապրանքների ցուցադրությունը կազմակերպվում է դարակաշարերում և ապրանքների ցուցադրման համար նախատեսված այլ հատվածներում ապրանքները տեղադրելու եղանակով:

7.3. Ապրանքների ցուցադրության համար Ընկերությունն իրավունք ունի մատակարարներից գանձել լրացուցիչ վճարներ կամ ստանալ զեղչեր մատակարարվող ապրանքներից:

7.4. Դարակաշարերում և այլ հատվածներում ցուցադրության համար գինը որոշվում է դրանց տեղով, դիրքով, կոնկրետ ապրանքի համար հատկացվելիք տեղի մակերեսով և

այլ հանգամանքներով, որոնք ուղղակիորեն կապված են ապանքի իրացվելիությունը խթանող հանգամանքների հետ։

7.5. Ընկերությունն իրավունք ունի լրացուցիչ վճարի դիմաց մատակարարներին առաջարկել ապրանքների իրացվելիությունը բարձրացնող լրացուցիչ միջոցառումներ, այդ թվում՝

- Ցուցադրության այլ պայմաններ և գովազդ Ընկերությանը պատկանող sas.am կայքում, հավելվածում, ինչպես նաև էլեկտրոնային այլ հարթակներում,
- Մատակարարի ապրանքային նշանով կամ առանց դրա լրացուցիչ ստենդների, սառնարանների տեղադրում Ընկերության առևտրային ցանցում,
- Մատակարարի նկարագրած պայմաններով և կարգով ակցիաների կազմակերպում և իրականացում Ընկերության առևտրային ցանցում,
- Մատակարարների վերաբերյալ պաստառների, բուկլետների, բաներների, տեսահոլովակների և աուդիոհոլովակների ներկայացում Ընկերության առևտրային ցանցում,
- Այլ մարքեթինգային միջոցառումներ։

7.6. Ապրանքների իրացվելիությունը բարձրացնող լրացուցիչ մարքեթինգային միջոցառումների վճարի չափը որոշվում է այդ միջոցառման բնույթով, նկարագրով, կոնկրետ ապրանքի կամ մատակարարի արտաքին գովազդի չափերով, տեղակայման վայրով, ցուցադրման ժամանակով, տեսագովազդի և աուդիոգովազդի տևողությամբ, հեռարձակման վայրերի քանակով, ինտենսիվությամբ և այլ հատկանիշներով, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքի իրացվելիությունը խթանող հանգամանքների հետ։

Հավելված

Առևտրային առաջարկի դիմումի ձև

Հավանական մատակարարի տվյալները

Անվանումը	Կազմակերպաի ըավական ձևը	Հարկման ռեժիմը	ՀՎՀՀ	Ծանուցման Հասցե	Էլեկտրոնային փոստ

Կոնտակտային անձի տվյալները

Անուն, Ազգանուն	Պաշտոնը	Ծանուցման Հասցե	Էլեկտրոնային հասցե	Հեռախոս

Հավանական մատակարարի կողմից առաջարկվող ապրանքները

Հ/Հ	Ապրանքի անվանում	Ապրանքի նկարագիր	Ապրանքի ծագման երկիր	ԱՏԳԱԱ	Ամսական կտրվածքով առաջարկվող քանակ	Մեկ միավորի գին	Մատակարարումների քանակը և պարբերական ությունը
1							
2							
3							
4							

Հարցաշար. (*անհրաժեշտ է ընդգծել ճիշտ պատասխանը և լրացնել տեղեկատվությունը*)

1. Արդյո՞ք մատակարարը գտնվում է լուծարման գործընթացում. ԱՅՈ/ՈՉ

2. Արդյո՞ք մատակարարը ճանաչվել է սնանկ. ԱՅՈ/ՈՉ

3. Մատակարարի նկատմամբ ձեռնարկված է սնանկության գործընթաց. ԱՅՈ/ՈՉ

4. Մատակարարի կողմից սեփական արտադրության, մակնշման և պահպանման համար սեփական արտադրական տարածքների առկայությունը. ԱՅՈ/ՈՉ

5. Մատակարարի կողմից այլ առևտրային ցանցերում ներկայացվածությունը. ԱՅՈ/ՈՉ

նշել անվանումները /լրացվում է ըստ ցանկության/ _____

6. Ապրանքի որակը բնութագրող լրացուցիչ միջազգային ստանդարտներին համապատասխան ստացված հավաստագրերի, սերտիֆիկատների առկայությունը.

_____

7. Ապրանքի վերաբերյալ օրգանական գյուղատնտեսության կանոններով արտադրության վերաբերյալ սերտիֆիկատի առկայությունը.

_____

8. Սեփական ապրանքային նշանի առկայությունը, նշել ապրանքային նշանը

_____

9. Մատակարարի պատրաստակամությունը քննարկելու ապրանքի փաթեթավորումը, քաշը, այլ հատկանիշները մինչև շուկայահանումը՝ Ընկերության պահանջներին համապատասխան. ԱՅՈ/ՈՉ

10. Տվյալ ոլորտում մատակարարի գործունեության սկիզբը և փորձառությունը

_____

11. Մատակարարի սեփական առաքման ցանցի առկայությունը. ԱՅՈ/ՈՉ

(ՈՉ-ի դեպքում նշել առաքման տարբերակը

_____----------)

12. Լրացուցիչ նշումներ

_____

_____

_____

_____

_____

Սույն դիմումով մատակարարը հավաստում է, որ իր պայմանագրային պարտավորությունները կատարում է բարեխիղճ, առաջարկվող ապրանքները, դրանց մակնշումը, փաթեթավորումը համապատասխանում են ՀՀ տարածքում գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջներին, ՀՀ օրենսդրության որևէ խախտում չի իրականացնում:

Դիմումատու՝

Ստորագրություն _____

Ամսաթիվ _____